Հտուն. եւ սուրբ Աստուածածինն անիծեց, թէ ձեր ջուրն աղու դառնայ. եւ եղեւ այնպէս: Եւ զարձաւ տրտում առ որդին եւ ետես զի յոտացն Յիսուսի ջուր բխած էր: Փառք Աստուծոյ: Եւ է մինչեւ ցայսօր, զի ամէն տեղ եւ գեղն աղի է եւ անդ քաղցր ջուր: Եւ այն ջրէն ամէն օր Փաշային տանին, զի այլ ջուր չի խմել: Եւ կայր հաւուղին առջեւն բոլորակ քամար՝ խորանի պէս եւ սէքուք եւ սեղանատեղք, ուր խուրպաննիս մորթեցաք, մոմ վառեցաք:

Եւ անտի մտաք ի մեծ պաղչա մի. եւ շրջեալ ի նմա՝ տեսաք բազում ծառս լիմոնի. զի Մսրայ լիմոնն փոքր է, ընկզաչափ, խիստ ջրոտ եւ թրթու. եւ գետինն ամէն անկածն թափել էր՝ կարկտի նման: Տեսաք եւ պալսանի ծառերն, ապա չորացել էին. եւ ասին թէ չորս եասախչի պահէին առաջն: Եւ դարձաք ի տուն:

ՎԱՆՈՐԱՑՔ

Եւ այլ օրն եկաք ի սուրբն Մինաս, որ ասեն Մինա: Եւ այն մեր եկեղեցի է. զի եւ անդ թաղեն զմեռեալս: Եւ ամէն եկեղեցիքն կան մատուռ կամ սեղան Հայոց. զի ասին եւ մեք գտաք ի պատմագիրս, թէ ԼՌ հայի տուն կայր[9]*. անտի է մնացել եկեղեցիքն:*

104 *դառնա*: — 116 *մսրայ*:

---

[9] *Հմմտ. Յայսմաւուրք Յուլիս 30· «Եւ էր յայնժամ (այսինքն յաւուրս Գրիգորի վկայասիրի) յազգէս Հայոց յեղիպտոս ԼՌ տունս համարով· որոց ետ եպիսկոպոս զքուերորդին իւր Գրիգորիս անուամբ»:*